


1.2. Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2005թ. հունվար-նոյեմբերին հանրապետությունում, ըստ 2216 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 584801.1 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 579950.3 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 59760.1 մլն. դրամի, այլ երկրներում՝ 156852.4 մլն. դրամի արտադրանք:

2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 106.8%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 106.6%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2003թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան

(%)

2004թ.	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
հունվար	85.5	91.1	85.5
փետրվար	95.5	98.1	81.7
մարտ	118.6	111.3	96.9
ապրիլ	106.5	119.3	103.2
մայիս	86.9	91.2	89.7
հունիս	111.7	106.0	100.2
հուլիս	95.0	98.4	95.2
օգոստոս	98.8	98.6	94.1
սեպտեմբեր	106.3	92.4	100.0
հոկտեմբեր	103.5	97.9	103.5
նոյեմբեր	94.2	100.9	97.5
դեկտեմբեր	103.0	106.9	100.4

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2005թ.			
հունվար	81.7	100.7	81.7
փետրվար	113.2	110.1	92.5
մարտ	111.6	103.7	103.2
ապրիլ	96.7	96.3	99.8
մայիս	103.2	110.9	103.0
հունիս	106.2	106.4	109.4
հուլիս	102.6	112.7	112.3
օգոստոս	89.2	105.1	100.2
սեպտեմբեր	105.8	105.6	106.0
հոկտեմբեր	103.7	103.8	109.9
նոյեմբեր	101.5	114.3	111.5

**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը
ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2005թ. հունվար-նոյեմբերին¹**

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	2005թ. արտադրանքի (աշխատանք- ների, ծառայությունների) ֆիզի- կական ծավալի ինդեքսը 2004թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (համադրելի գներով), %
Ամբողջ արդյունաբերությունը	584801.1	579950.3	106.8
<i>այդ թվում՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	95638.1	95638.1	107.8
<i>որանից՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	87576.1	87576.1	110.5
<i>որից՝</i>			
էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	75262.4	75262.4	106.5
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	12313.7	12313.7	143.3
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	8062.0	8062.0	84.8
հանքագործական արդյունաբերություն	104879.8	97441.0	96.0
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	102293.4	94966.5	95.8
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	2586.4	2474.5	104.0
մշակող արդյունաբերություն	384283.2	386871.2	109.3
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն	165369.3	166662.5	102.6
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	14952.0	15582.3	115.8
մանածագործական արտադրություն	2157.1	2167.8	75.7
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	1771.0	1737.5	68.3
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն	256.2	277.7	86.9
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	961.1	978.9	79.5



¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղվում է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ



	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ¹ , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ¹ , մլն. դրամ	2005թ. (աշխատանքների, ծառայությունների) ֆիզի- կական ծավալի ինդեքսը 2004թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (համադրելի գներով), %
հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում	7023.2	7385.2	115.8
քիմիական արդյունաբերություն	14762.0	8445.3	153.4
ռետինե և պլաստմասսայե արտա- դրատեսակների արտադրություն	3716.0	3452.4	136.0
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	21359.1	20837.0	123.7
մետաղագործական արդյունաբերություն	116596.5	120591.9	138.8
պատրաստի մետաղե արտադրատե- սակների արտադրություն	5478.9	5482.4	132.6
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	5454.4	5600.8	85.5
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	12756.5	14275.4	96.3
գործունեության այլ տեսակներ	11669.9	13394.1	93.7

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2005թ. հունվար-նոյեմբերին





¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:


Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում



Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




Հանքագործական արդյունաբերություն



- մետաղե հանքաքարերի արդյունահանում
- հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր

Մշակող արդյունաբերություն



- 1-սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 2-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 3-մանածագործական արտադրություն
- 4-հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 5-հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6-քիմիական արդյունաբերություն
- 7- այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-մետաղագործական արդյունաբերություն
- 9-պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10-մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 11-ոսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

2005թ. հունվար-նոյեմբերին արտադրված (հաշվառվող) 115 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 53 -ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2004թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 62 -ից 27 -ի և սպառողական ապրանքների՝ 53 -ից 26 -ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները¹

(մլն. դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-նոյեմբերին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2005	2004 ²	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	204393.8	205748.1	99.3
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	119600.7	117665.1	101.6
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	41682.0	39543.1	105.4
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	43111.1	48539.9	88.8
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության ³	9213.6	13212.4	69.7
մշակութային և տնտեսական նշանակության	33897.5	35327.5	96.0

Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները⁴

	2005 թ. հունվար-նոյեմբեր	2004 թ. հունվար-նոյեմբեր	2005թ. հունվար-նոյեմբերը 2004 թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %
Միս ⁵ , տոննա	40421	38054	106.2
Մսամթերք, ներառյալ երշիկեղեն, տոննա	1150.4	909.0	126.6
Պանիր, տոննա	13374.6	13417.4	99.7
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ⁵ , տոննա	353763	331172	106.8
Պաղպաղակ, տոննա	1736.5	1493.9	116.2
Պահածո, տոննա	10714.7	6805.8	157.4
Ալյուր, տոննա	128173	134590	95.2
Չավարեղեն, տոննա	1005.0	4.0	251.3 անգամ
Հաց և հացամթերք, հազ. տոննա	270.1	270.1	100.0
Հրուշակեղեն, տոննա	4462.7	3691.8	120.9
Մակարոնեղեն, տոննա	2478.3	2151.2	115.2
Շաքարավազ, տոննա	1893.0	648.7	2.9 անգամ
Բուսական յուղ, տոննա	266.5	354.9	75.1
Օղի և օղու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	11948.7	11150.8	107.2
Կոնյակ, հազ. լիտր	7930.1	6821.5	116.3
Գինի, հազ. լիտր	1855.6	1871.0	99.2
Շամպայն գինի, հազ. լիտր	350.2	449.4	77.9
Գարեջուր, հազ. լիտր	10166.5	8157.0	124.6
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	27775.5	32035.3	86.7
Բնական հյութեր, հազ. լիտր	3826.8	4194.2	91.2
Հանքային ջրեր, հազ. լիտր	21704.4	17568.8	123.5
Աղ, տոննա	31825.4	28028.7	113.5
Սիգարետներ, մլն. հատ	2750.2	2450.7	112.2
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	665.2	484.4	137.3

¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

² 2004թ. սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2005թ. գներով:

³ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

⁴ Այստեղ և հետապու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն գետնելվում է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):

⁵ Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

Մանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2005 թ. հունվար-նոյեմբեր	2004 թ. հունվար-նոյեմբեր	2005թ. հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	133.2	219.0	60.8
Գորգեր և գորգեղեն, մ ²	25172	25070	100.4
Գուլպեղեն, հազ. զույգ	417.4	324.5	128.6
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	2332.0	2932.3	79.5
Կարի արտադրանք ¹ , մլն. դրամ	6070.8	9084.2	66.8

2005թ. հունվար-նոյեմբերին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից ավտոդողերի արտադրությունը 2004թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 34.2 անգամ, կաուստիկ սոդայինը՝ 2.2 անգամ, սինթետիկ կաուչուկինը՝ 98.9%-ով, պլաստմասսայե արտադրատեսակներինը՝ 38.7%-ով, լվացող, մաքրող և օսլայող միջոցներինը՝ 10.4%-ով:

Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2005 թ. հունվար-նոյեմբեր	2004 թ. հունվար-նոյեմբեր	2005թ. հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	33156	31380	105.7
Ապրանքային բետոն, մ ³	82966	45403	182.7
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	160058	144375	110.9
Ոչ հանքային շինանյութեր, մ ³	355910	427837	83.2
Կիր, տոննա	8529.0	3020.0	2.8 անգամ
Ցեմենտ, հազ. տոննա	544.7	460.1	118.4
Գաջ, տոննա	41605.0	48884.0	85.1
Ուղիղ կտրվածքի տուֆ, մ ³	54667	63336	86.3
Ծակոտկեն լցանյութեր, մ ³	157292	133621	117.7
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ ²	47038	66048	71.2

Մետաղագործական արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2004թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ցինկի խտանյութի արտադրությունն ավելացել է 58.7%-ով, կոնվերտորային (սև) պղնձինը՝ 6.5%-ով, իսկ պղնձի խտանյութում պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 8.0 և 9.6%-ով:

Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2005թ. հունվար-նոյեմբեր	2004թ. հունվար-նոյեմբեր	2005թ. հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	82	231	35.5
Ուելներ, հատ	296082	341970	86.6
Ուժային ճկուն կաբելներ, կմ	212.8	5.7	37.3 անգամ
Տեղակայման հաղորդալարեր, կմ	620.9	295.0	2.1 անգամ

¹ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

	2005թ. հունվար- նոյեմբեր	2004թ. հունվար- նոյեմբեր	2005թ. հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %
Եմալապատ լարեր և փաթութալարեր, տոննա	102.8	108.4	94.8
Էլեկտրաեռակցման սարքավորումներ, հատ	7870	11220	70.1
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	2664.0	4307.2	61.8
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	1047	5142	20.4
Ուժային տրանսֆորմատորներ, հատ	15	125	12.0
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	85	388	21.9
0.5-100 կՎտ հզորության փոփոխական հոսանքի զեներատորներ, հատ	4	25	16.0
Համակարգիչներ, հատ	1915	2226	86.0
Ջրային հաշվիչներ, հատ	122	3600	3.4
Էլեկտրական հաշվիչներ, հատ	7981	5902	135.2
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	325	281	115.7
Պոմպեր, հատ	383	522	73.4

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունվար-նոյեմբերին հանրապետությունում թողարկվել է 5760.6 մլն. կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2004թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 106.2%-ը: Ընդ որում, ՀԱԷԿ-ում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 15.1% -ով, ՋԷԿ-երում՝ 19.0% -ով, իսկ ՀԷԿ-երում նվազել է 13.1% -ով:

2005թ. հունվար-նոյեմբերին ՀԱԷԿ-ը թողարկել է 2437.3 մլն. կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 42.7% -ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 1637.4 մլն. կՎտ ժամ և 28.7%-ը, ՀԷԿ-երը՝ 1631.9 մլն. կՎտ ժամ և 28.6%-ը:

2005թ. հունվար-նոյեմբերին հանրապետությունում թողարկվել է 352.9 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2004թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 117.8%: